

## Եզրակացություն

### Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ

ՀՀ Վարչապետի 20.07.2018թ. հ. 986-Ա որոշմամբ ստեղծված՝ Հայաստանի հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխանող՝ հաշվետու հանքարդյունաբերության քաղաքականության ներդրմանն ու իրականացմանն աջակցող աշխատանքային խմբի կազմում, իմ կողմից ուսումնասիրվել են Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի վերաբերյալ, «Գեոթիմ» ՓԲԸ-ի, այժմ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի /հետագայում՝ Ընկերություն/ կողմից բնապահպանական փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերը և դրա հետ առնչվող իրավական ակտերը: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են մի շարք իրավական խախտումներ, բացթողումներ, անճշտություններ, որոնք թույլ են տրվել, ինչպես Ընկերության, այդպես էլ լիազոր պետական գերատեսչությունների կողմից:

#### 1. Զրային և Սևանա լճի մասին օրենսդրության խախտումները

Ամուլսարի հանքավայրը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանում և դրա շահագործման արդյունքում աղտոտվելու են ստորգետնյա և վերգետնյա ջրերը, որոնք թափվում են Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարներ, այնուհետ՝ Որոտան-Արփա-Սևան թունելով Սևանա լիճ, վնասվելու է Սևանա լճի էկոհամակարգը:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Սևանա լճի ջրհավաք ավազան՝ տարածք, որի մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Սևանա լճի ջրհավաք ավազանի մասն են կազմում նաև **Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրհավաք ավազանները**՝ մինչև Կեչուտի ջրամբար.

*Սևանա լճի էկոհամակարգ՝ Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի կենդանի ու անկենդան ենթահամակարգերը՝ նրանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ամբողջականությամբ.*» Բացի այդ, այն գտնվում է անմիջական ազդեցության գոտում, որը «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն. «ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրհավաք ավազանը՝ մինչև ջրբաժան, որտեղ ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ազդում է Սևանա լճի, նրա մեջ թափվող գետերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական, սանիտարաթունաբանական, հիգիենիկ և այլ որակական ու քանակական ցուցանիշների վրա:» Նույն Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. «1. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում **արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:**

2. Անմիջական ազդեցության գոտում **արգելվում են՝**

ա) **էկոլոգիապես վնասակար**, օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և **կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների** օգտագործումը.

բ) **ռադիոակտիվ նյութերի և թափոնների**, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, **օգտագործումը, պահեստավորումը և տեղադրումը.**

գ) **հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.**

դ) քարածխի և հեղուկ վառելիքային բազայի վրա աշխատող 10 մեգավատտից ավելի հզորությամբ ջերմային էներգիայի աղբյուրների գործարկումը:»

Նույն Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «1. Սևանա լճի էկոհամակարգի բնականոն գործունեության ապահովման նպատակով Սևանա լճի էկոհամակարգում արգելվում է օգտագործել՝

ա) ջրային օրգանիզմների համար բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

բ) սննդային շղթաներով փոխանցվող և բույսերի ու կենդանիների օրգանիզմներում կուտակվող ոչ բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

գ) Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի, աղբյուրների ջրերում դանդաղ քայքայվող բարձր և ոչ բարձր տոքսիկություն ունեցող նյութեր.

դ) Սևանա լճի էկոհամակարգի համար վտանգավոր, սակայն կենսահամակարգից արագ հեռացվող նյութեր.

ե) թույլատրելի նորմերը գերազանցող կենսածին տարրեր, ծանր մետաղներ կամ նրանց միացություններ: Սակայն, հաշվի առնելով, որ այս հանքը՝ բաց հանք է, բացի ոսկուց կան ուրանի, թորիումի, սնդիկի, մկնդեղի, ծանր մետաղների պարունակություն, սուլֆիդային ապարների պարագայում առկա է թթվային դրենաժը, կատարվելու են մեծ ծավալի պայթեցումներ, իսկ ոսկու կորզումը իրականացվելու է ցիանիդային եղանակով /ինչը շատ երկրներում արգելված է կիրառել աղքատ ոսկու հանքավայրերում/, ապա կարելի պատկերացնել՝ թե ինչ աստիճանի տոքսիկություն ունեցող նյութեր և ծանր մետաղներ կլցվեն Արփա և Որոտան գետեր, Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարներ, այնուհետ՝ Սևանա լիճ: Պատահական չէ, որ ԳԱԱ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովը 2012թ. Ամուլսարի ծրագրին տվել է բացասական եզրակացություն: Մասնավորապես, եղել են հետևյալ հիմնավումները.

- «հանքավայրի լցակույտերը նախատեսվում են 2570-2360մ նիշերի սահմաններում, 735թ. աղետալի երկրաշարժի մի քանի կիլոմետր հեռավորության վրա. 40-50մ բարձրությամբ 4 շերտով շուրջ 100մ միջին բարձրությամբ  $m=1,0$  շեյերի թեքությամբ, առանց միջանկյալ բերմանների: Նախագծում չկան շեյերի կայունությունը հիմնավորող հաշվարկներ՝ հաշվի առնելով տարածաշրջանի 10 բալ սեյսմիկ ուժգնությունը:»
- «նախագծում լցակույտի համար նախատեսված իջույթի հիդրոերկրաբանական առանձնահատկությունների շնորհիվ դիտարկվում են գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, որոնք լցակույտում պարունակվող վտանգավոր բաղադրիչները կտեղափոխեն Որոտանի գետահունը, այնուհետև Որոտան-Արփա-Սևան թունելով՝ Սևանա լիճ»
- Իջույթի սահմաններում զարգացած են ակտիվ սողանքային տեղամասեր, որոնց վրա լցակույտերի բեռնվարումը և հանքավայրում պայթեցման գործընթացները կարող են առավել ակտիվացնել սողանքային երևույթները, հատկապես զարնանային ամփսներին, իրենց անկախատեսելի հետևանքներով:»
- «Ռադոնի կոնցենտրացիան գերազանցում է 400ԲԿ  $m^{-3}$  ներգործության մակարդակը, բայց «Շրջակա միավայրի վրա ազդեցության գնահատման» հատորում ոչ մի միջոցառում չի նախատեսված ռադոնի մակարդակը իջեցնելու համար:»

Չնայած նրան, որ նշված հանգամանքներից ոչ մեկը չեն վերացել, նույն հանձնաժողովը 29.02.2016թ. անհիմն և անօրինական տվել է դրական եզրակացություն:

Ընկերության կողմից անտեսվել է և շարունակվում է անտեսվել Սևանա լճի վրա բացասական ազդեցության հարցը: Եթե նախկինում իրենք պնդում էին, որ որևէ ազդեցություն չի լինելու Սևանա լճի վրա, այժմ ընդունել են Սևանի վրա ազդեցությունը, սակայն այն փորձել են լուծել կուտակային տարավազման հարթակը /ԿՏՏ/ տեղափոխելով Գնդեվազ գյուղի մոտ: Սակայն, հանքարդյունահանումը, հանքաքարի մանրացումը և դատարկ ապարների կույտավորման աշխատանքները կատարվելու են Սևանա լճի ջրհավաք ավազանում՝ աղտոտելով այն:

Խախտվել են նաև ՀՀ Ջրային օրենսգրքի մի շարք պահանջներ: ՀՀ Ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսները ենթակա են պահպանության: Ջրային ռեսուրսի պահպանության **հիմնական պահանջներն են՝**

2) ջրային ռեսուրսն էկոհամակարգերի և բնական լանդշաֆտների բաղկացուցիչ մասն է, և դրա պահպանությունը պայմանավորված է տվյալ էկոհամակարգի հավասարակշռությամբ.

3) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության ինչպես օգտագործման, այնպես էլ չօգտագործման դեպքերում.

6) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության աղտոտումից, աղբոտումից, վարակումից և հյուծումից.

7) կեղտաջրերի արտահոսքը ջրային ռեսուրս թույլատրվում է միայն սույն օրենսգրքի պահանջների համաձայն՝ արտահոսքի թույլտվության առկայության դեպքում.

8) ջրային ռեսուրսի ակվատորիայի կամ ջրապահպան գոտու տարածքում արգելվում է կատարել որևէ տեսակի աշխատանք, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

9) ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում սահմանափակվում կամ արգելվում են գործունեության որոշակի տեսակներ (ներառյալ՝ հողերի ոռոգումը կեղտաջրերով)՝ լուծիչներ կամ քիմիկատներ արտադրող, օգտագործող կամ պահող արդյունաբերական կամ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, տնտեսական գործունեության ընթացքում առաջացող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, այլ արտադրանքների և մթերքների մնացորդների աղբանոցների տեղադրումը.

10) հետախուզական, օգտագործման համար ոչ պիտանի, ճնշումային, ընդհատված օգտագործմամբ հորատանցքերը ենթակա են կոնսերվացման կամ վերացման.

11) արգելվում է ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը և թաղումը ջրային ռեսուրսում, ինչպես նաև պայթեցման աշխատանքների իրականացումը միջուկային և այլ տիպի տեխնոլոգիաներով, որոնք ընթանում են ռադիոակտիվ և թունավոր նյութերի արտանետմամբ:»

Բացի այդ, ՀՀ Ջրային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն. «Ջրհավաք ավազաններում արգելվում է՝

2) ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը»:

Այն, որ ջրերը աղտոտվելու են անձրեվների, ձնհալի ազդեցության տակ բաց ապարների լվացման արդյունքում, հաստատում է նաև Ընկերությունը: ԲՄԱԳ-ում նշված է. «ԹԱԴ առաջացնելու ռիսկն աճում է այնտեղ, որտեղ ապարները մերկանում են. սա վերաբերում է շինարարության և շահագործման գործողություններին: Ջրի քիմիական ռեակցիան, մերկացած ապարներում սուլֆիդը և օդում թթվածինը առաջացնում են թթվայնություն: Այդ թթվայնությունը նվազեցնում է ջրածնային ցուցիչը և փոխում մետաղների շարժը: Ցածր ջրածնային ցուցիչի դեպքում շատ թունավոր մետաղներ, ինչպիսիք են մկնդեղը, կապարը և ցինկը, ավելի հեշտ են տարրալուծվում: Հանքարդյունաբերական գործողությունները խթանում են ԹԱԴ-ի գոյացումը, քանի որ սուլֆիդը հանքափոսում և դրանից փորված, հանված դատարկ ապարներում ենթարկվում է ներազդեցության:» Սակայն, նախկին փորձաքննությունների ժամանակ Ընկերությունը թաքցրել է կամ չի ուսումնասիրել թթվային դրենաժի առկայությունը, իսկ 2016թ. ՇՄԱԳ-ում նշված է, որ բաց ապարներում թթվային դրենաժը աննշան է և էական ազդեցություն չի ունենա ջրերի որակի վրա: Մնացած տարածքներում թթվային դրենաժի առկայությունը չի ուսումնասիրվել և գնահատվել:

Ընկերությունը փորձաքննությանը՝ միտումնավոր կամ անփորձության պատճառով, ներկայացրել է թերի, կեղծ, ոչ արժանահավատ տվյալներ, մոլորության մեջ զցելով փորձաքննության մարմնին, ստացել է դրական եզրակացություն: Հետագայում, տարբեր մասնագետների և անկախ փորձագետների ուսումնասիրություններից և եզրակացություններից ի հայտ են եկել այնպիսի նոր գործոններ և հանգամանքներ, որոնք Ընկերությունը թաքցրել է կամ սխալ է ներկայացրել, ինչը էական ազդեցություն է ունեցել փորձաքննության արդյունքի վրա և բացասական ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:

Մասնավորապես,

- Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերում բացակայում են իրականացվող գործունեության արդյունքում առաջացող թթվային դրենաժի իրական քանակը, վտանգավորությունը, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վնասազերծման արդյունավետ մեխանիզմները: Համապատասխանաբար, «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը փորձաքննություն իրականացնելիս չի գնահատել թթվային դրենաժի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, ինչը կարող էր էական նշանակություն ունենալ եզրակացության բովանդակության և որոշումների կայացման արդյունքների վրա: Փորձաքննություն իրականացնող մարմինը փորձում է ներկայացնել, որ փորձաքննությանը ներկայացվել է ապարների Թթվային դրենաժի կառավարման պլանը և այն նոր ի հայտ եկած հանգամանք չէ: Սակայն, դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ փաստաթուղթը դեռ

2017թ. անգլերեն լեզվով է եղել և հայերեն թարգմանված չէր, հետևաբար, այն չէր կարող անգլերեն լեզվով ներկայացված լինել փորձաքննությանը և այն գնահատվել: Այս դեպքում, հարց է առաջանում, ինչպե՞ս է տրվել փորձաքննական դրական եզրակացություն, երբ ակնհայտ է, որ կատարածաշրջանի ջրերի աղտոտման լուրջ վտանգ: Այս դեպքում, փորձագետը և փորձաքննական եզրակացությունը հաստատած պաշտոնատար անձինք պետք է պատասխանատվության ենթարկվեն:

Հաշվի առնելով, որ սուլֆիդային ապարների առկայության պարագայում հանքարդյունահանման արդյունքում կառաջանա թթվային դրենաժ, հասարակական կազմակերպությունների և ազդակիր համայնքերի բնակիչների խնդրանքով, պատվիրվել է Ամուլսարի հանքի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության անկախ փորձաքննություն «Բլու Միներալս Քոնսալանսի» ընկերությանը /Հարավային Ավստրալիա/, որի փորձագետներ՝ Անդրեա Գերսոնի և Ռոջեր Սմարթի կողմից իրականացվել է Ամուլսարի ոսկու հանքավայրի նախագծի գնահատում՝ Թթվային ապարների դրենաժի գոյացման պոտենցիալը և մակերեսային ու ստորգետնյա ջրերի վրա դրա ազդեցության գնահատական վերնագրով և 18.06.2017թ. տրվել է Ամփոփ հաշվետվություն, իսկ 24.07.2017թ.՝ դոկտոր Անդրեա Գերսոնի /«Բլու Մինիրալս Քոնսալթինգ» Ավստրալիա/, դոկտոր Անն Մաեսթի /Բուկա Ինվայրնմենթալ Բուրդեր Քո» ԱՄՆ և դոկտոր Անդրե Սոբոլսկու /«Քլիեր Քոսթ Քոնսալթինգ, Ինք.» Կանադա/ կողմից կազմվել է Ամփոփագիր: Գնահատումը կատարվել է Ընկերության կողմից պատրաստված և ՀՀ բնապահպանության նախարարություն՝ փորձաքննության համար ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Միջազգային փորձագետները փաստել են. «Հայաստանում Լիդիանի Ամուլսարի ոսկու հանքավայրի նախագիծը չունի պատշաճ բնապահպանական գնահատական, իսկ երկարատև թթվագոյացումը սպառնում է ջրի որակին:» Իսկ Ընկերությունը ներկայացրել էր, որ ազդեցությունը աննշան է լինելու:

Փորձագետները նշում են նաև, որ Ընկերությունը ոչ բավարար երկրաքիմիական փորձարկումներ է արել, մասնավորապես, «ավելի քան 2000 նմուշներ պետք է ուսումնասիրվեն թթվահիմնային հաշվառման տեսանկյունից, մինչդեռ ուսումնասիրվել են մոտ 200 նմուշներ», բացի այդ «երկրաքիմիական փորձարկում է իրականացվել չափազանց քիչ քանակի նմուշների և դրանք ներկայացուցչական չեն»:

Բացի այդ փորձագետները նշում են, որ տրվել է «ոչ ճիշտ գնահատական:» Ընկերության՝ «դիմադրություն ուժեղ ԹԱԴ-ի ձևավորման և երկաթի եռավալենտ սուլֆատների օքսիդացումից առաջացած ԹԱԴ-ի նկատմամբ» կրկնվող պնդումները սխալ են:» Բացի այդ, «թթվաարտազատող յարոզիտ և ալունիտ հանքանյութեր հայտնաբերվել են թե՛ վերին և թե՛ ստորին հրաբխային ապարներում: Ալունիտի

տարրավագումից թթվագոյացումը թերագնահատվում է, համարելով ոչ զգալի, իսկ յարոզիտի տարրավագումից թթվագոյացումը ընդհանրապես հաշվի չի առնվում»:

Փորձաքննության ընթացքում չի գնահատվել «մետաղի հնարավոր արտազատման բարձր մակարդակը», մասնավորապես, «որ պոտենցիալ մտահոգիչ կոնցենտրացիաներով ամոնիում, ծարիր, մկնդեղ, բերիլիում, բիսմութ, կադմիում, պղինձ, կապար, մանգան, սնդիկ, մոլիբդեն, նիկել, նիտրատ, սելեն, արծաթ, յուղ և ճարպ, վանադիում և ցինկ բոլորը միասին կարտանետվեն ջրուղիներ»:

Այսպիսով, միջազգային չորս փորձագետներ փաստել են, որ Ամուլսարի ոսկու հանքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը կատարվել է թերի, չի գնահատվել թթվային դրենաժի առկայությունը և չեն նախատեսվել իրական վտանգին համարժեք միջոցառումներ այն կանխելու համար: Առկա թերությունները մանրամասն ներկայացված են կից ներկայացվող փաստաթղթերում: Միաժամանակ, գիտնականները փաստել են, որ թթվային հոսքը կարող է «շարունակվել տասնյակ տարիներ կամ դարեր» և Հայաստանի կառավարության համար ընթացիկ ծախսերը հանքի գործունեության դադարեցումից հետո կարող են գերազանցել շահագործման ժամանակ պետության ստացած եկամուտները»:

Փորձագետներ՝ Անն Մաեսթր և Անդրե Սոբոլսկին 2018թ. հունիսի 18-23 գտնվել են Հայաստանում՝ հանդիպել են ՀՀ կառավարության պաշտոնյաների, Ընկերության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այցելել Ամուլսար, ինչից հետո փորձագետների մտավախությունները թթվային դրենաժի վտանգների վերաբերյալ, ոչ միայն չեն վերացել, այլ ավելի խորացել են: Փորձագետները՝ իրենց ասուլիսի [/http://hetq.am/arm/news/90610/bronozyani-khorhrdatuneri-haytararutyuny.html/](http://hetq.am/arm/news/90610/bronozyani-khorhrdatuneri-haytararutyuny.html/) ժամանակ նշել են. «Մենք շարունակում ենք պնդել մեր համոզմունքը, որ Ամուլսարի նախագիծը ունի մի քանի սերունդների կյանքի տևողությամբ թթվային դրենաժ առաջացնելու մեծ ռիսկ: Թթվային դրենաժը վտանգի կենթարկի Արփա, Դարբ և Որոտան գետերն ու տարածքի բնական միջավայրը»:

Ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ նրանք տեղեկացվել են, որ «Ընկերությունը ունի թթվային դրենաժը բնութագրելու և մեղմացնելու նոր պլաններ: Սրանք էական շեղումներ են 2016թ. Ընկերության ներկայացրած Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականից /ԲՄԱԳ/: Նման փոփոխությունները պետք է ներկայացվեն Հայաստանի կառավարությանը նախքան արդյունահանման սկսվելը»:

Ասուլիսի ժամանակ նրանք նաև նշեցին, թե Ընկերությունը իրենց տեղեկացրել է, որ վերանայվել են իրենց մոտեցումները, հիմնվելով մասնակիորեն փորձագետների վերլուծությունների վրա, իսկ նման փոփոխություններ մտցնելը նշանակում է «ընդունել, որ նախկինում որդեգրված մոտեցումները չեն

համապատասխանել այս տարածքում թթվային դրենաժը վերահսկելու անհրաժեշտությանը:» Քննարկելով Ընկերության նոր մոտեցումները, փորձագետները հանգել են այն եզրակացությանը, որ «դրանք ոլորտում արտասովոր, չապացուցված մոտեցումներ են, որոնք չեն համապատասխանում միջազգային լավագույն պրակտիկաներին:» Ամփոփելով վերլուծությունները, փորձագետները նշել են. «Ամուլսարում ոսկու արդյունահանման ծրագրի իրականացումը վտանգում է Հայաստանի ջրային ռեսուրսները: Հայաստանի այս զգայուն ու մեծ արժեք ունեցող հատվածը չի կարող Լիդիանի էքսպերիմենտալ մեթոդների համար փորձադաշտ լինել»:

Այսպիսով, ակնհայտ է, որ թթվային դրենաժի այս աստիճանի վտանգավոր լինելու փաստը Ընկերությունը թաքցրել է փորձաքննություն իրականացնող մարմնից /ի դեպ Ընկերության կողմից փորձաքննությանը ներկայացրած փաստաթղթերի մեջ չի եղել Թթվային դրենաժի կառավարման պլանը, ինչը վկայակոչում է Բնապահպանության նախարարությունը, որպեսզի չհամարի նոր ի հայտ եկած հանգամանք/ , ինչի արդյունքում այն չի գնահատվել և փորձաքննվել: Բացի այդ նախարարության տրված դրական եզրակացության մեջ չկա և ոչ մի բառ ապարների թթվային դրենաժի և դրա կառավարման միջոցառումների մասին: Հետևաբար, վերը նշված փորձագետների եզրակացությունները նոր հանգամանք են, որի առկայության պայմաններում Ամուլսարի ծրագրին տրված դրական եզրակացությունը չի կարող գործել և այն պետք է ուժը կորցրած ճանաչվի:

Այսինքն, ստացվում է, որ մինչ այդ Ընկերությունը ոչ արժանահավատ տեղեկություն է ներկայացրել փորձաքննության մարմնին, իսկ փորձագետները անտեսել են Սևանա լճի վրա ազդեցության հանգամանքը, անտեսելով հասարակության փաստարկները, տվել են անօրինական դրական եզրակացություն: Ներկայացված փաստաթղթերով Ընկերությունը շարունակում է մոլորության մեջ զցել հասարակությանը և փորձագետներին, նպատակ ունենալով ամեն կերպ հասնել իր նպատակին:

Այսպիսով, ակնհայտ է, որ Ամուլսարի հանքավայրի գործարկումը խախտում է ՀՀ Ջրակին օրենսգրքի և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, և էական վնաս է պատճառելու Սևանա լճին և դրա ջրհավաք ավազանին, վտանգի տակ դնելով, Ինչպես Ջերմուկի հանքային ջրերի, այնպես էլ Սևանի ջրհավաք ավազանի պահպանությունը:

Բացի այդ, ՀՀ Կառավարության 18.07.2013թ. N 746-Ն որոշմամբ հաստատված «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծի» 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն. «Սպանդարյան ջրամբարի բնապահպանական վիճակը ներկայումս զերծ է բացասական ազդեցություններից, այնուհանդերձ հետագայում ևս աղտոտման վտանգը կանխելու միտումով ջրամբարի՝ «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով ամրագրվել են Սպանդարյան ջրամբարի ջրհավաքի սահմանները (մինչև ջրամբարի վերջը), ինչպես նաև **Որոտան-Սևան թունելի առանցքից 3000-ական մետր հորիզոնական չափով շերտագիծը՝ որպես Սևանա լճի ջրհավաք ավազանի**

**անմիջական ազդեցության գոտու մաս**, որտեղ **ցանկացած գործունեություն** ուղղակի կամ անուղղակի ճանապարհով **ազդում է** Սևանա լիճ տեղափոխվող ջրերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական, սանիտարաթունաբանական, հիգիենիկ և այլ որակական ու քանակական ցուցանիշների վրա:» Սակայն, նշված որոշման այդ դրույթը խախտվել է Ընկերության կողմից, քանի որ հանքախորշների զգալի մասը ներառված է 3000մ շերտագծի /բուֆերային գոտու/ մեջ, ինչը լուրջ աղտոտման վտանգ է Սևանա լճի համար: Չեն ուսումնասիրվել Որոտան-Արփա-Սևան թունելի և Սպանդարյանի ու Կեչուտի ջրամբարների պատվարների ելակետային/զրոյական վիճակը, որպեսզի հետագայում հնարավոր լինի գնահատել դրանց վրա թթվային դրենաժի ազդեցությունը, ինչը կարող է ավերիչ աղետի պատճառ լինել Հայաստանի կարևորագույն այս կառույցների համար:

## **2. Ջերմուկ առողջարանի մասին օրենսդրության խախտումները**

Նախկին փորձաքննությունների ժամանակ Ջերմուկը չի հանդիսացել ազդակիր համայնք, լինելով եզակի հանքային բուժիչ ջրերի աղբյուրներով հայտնի առողջարանային և ջրաբուժական քաղաք, զբոսաշրջության կենտրոն և ջրաբանական պետական արգելավայր: Մինչև 2016 թվականը բազմաթիվ քննարկումների ժամանակ Ընկերության ներկայացուցիչները հիմնավորում էին, որ Ջերմուկ քաղաքը գտնվում է հանքավայրից հեռու և որևէ ազդեցության չի ենթարկվելու: Այժմ բոլոր փաստաթղթերում նշված է Ջերմուկ քաղաքը, և այն համարվել է ազդակիր, չնայած որևէ լուրջ ուսումնասիրություն չի արվել Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների, օդի և ջրերի մաքրության վրա հանքավայրի ազդեցության վերաբերյալ: Այս պարագայում, եթե Ջերմուկը ազդակիր համայնք է և նախկին փորձաքննությունների ժամանակ չի ճանաչվել այդպիսին և հանրային քննարկումներ այնտեղ չեն իրականացվել, հետևաբար, բոլոր փորձաքննական եզրակացությունները անօրինական են, քանի որ դրանք կատարվել են ՀՀ օրենսդրության և Օրհուսի Կոնվենցիայի պահանջների խախտումով: Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանության գոտիներում արգելվում է պայթեցումներ կատարել, ծավալել շրջակա միջավայրը աղտոտող ցանկացած տնտեսական գործունեություն:

Ընկերությունը նշում է, որ ջրերի իզոտոպային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարածքի ջրավազանը կապված չէ Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների հետ: Սակայն, մասնագետների պնդմամբ, Ընկերության կողմից չեն իրականացվել է բավարար քանակի իզոտոպային հետազոտություններ (ընդամենը մեկ նմուշառում է արվել), ինչը հնարավորություն չի տալիս պարզել այդ կապը: Եթե նախկինում, Ընկերության ներկայացուցիչները հերքում էին, որ պայթեցումները կարող են ազդեցություն ունենալ շրջապատող բնակավայրերի վրա, ապա 05.07.16թ. իրենք Գնդեվազ գյուղում շրջայց են կատարել համայնքի անդամների տները և ֆիքսել, ինչ ճաքեր և վնասվածքներ են առկա, որպեսզի հետագայում իրենց պարզ լինի ո՞ր տնատիրությանը պետք է փոխհատուցվի վնասի դեպքում: Եթե ցնցումները այնքան ուժեղ են լինելու, որ կարող են առաջացնել տների վնասվածքներ, ապա այդ ցնցումները, առանց այդ էլ ակտիվ տեկտոնիկ գոտում, կարող են առաջացնել



հանքային ջրերի աղբյուրների կորուստ կամ վնասում, ինչը անգնահատելի բնապահպանական և տնտեսական վնաս կպատճառի Հայաստանի Հանրապետությանը:

Ստորգետնյա ջրային ավազանը նույնպես բացասական ազդեցություն կկրի, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների և Սևանա լճի ջրհավաք ավազանի վրա: Ընկերությունը՝ իր ԲՄԱԳ-ում նշում է. «Պայթեցման գործողություններում օգտագործվող ազոտի միացությունները կարող են աղտոտել բացահանքերում առկա ջուրը: Ամենայն հավանականությամբ, այս միացությունների ներծծանցում տեղի կունենա ստորգետնյա ջրերի մեջ... Նիտրատի կոնցենտրացիաների աճ կարող է տեղի ունենալ հանքի շահագործմանը հաջորդող ժամանակահատվածում ստորգետնյա ջրերից սնվող, հանքափոսերին շատ մոտ գտնվող բարձրադիր բազմամյա աղբյուրներում:» Միաժամանակ նշվում է. «Բացահանքերի տարածքից ԹԱԴ հոսակորուստները կարող են ստորգետնյա ջրերի որակի վրա ազդեցություն ունենալ: Սա կարող է ազդել բացահանքերի մոտակայքի աղբյուրների և գետերի ամենամյա հոսքերը սնուցող ստորգետնյա ջրերի վրա»:

Բացի այդ, ազդեցություն կկրի Ջերմուկ քաղաքի ջրամատակարարումը: Ինչպես նշված է ԲՄԱԳ-ում «Ջերմուկի ջուրը մատակարարվում է աղբյուրների 4 խմբից, որոնցից մեկը՝ Մադիկենց աղբյուրը Ծրագրի տարածքում է:» Այնուհետ նշվում է. «ստորգետնյա ջրերի հոսքուղիների փոփոխությունների պատճառով Ամուլսար լեռան վրա որոշ բարձրադիր աղբյուրներ կարող են չորանալ ուշ ամռանն ու ձմռանը:» Այսինքն, Ջերմուկ քաղաքը կկորցնի իր խմելու ջրի աղբյուրները, քանի որ դրանք կամ կաղտոտվեն, կամ հանքի գործարկման արդյունքում կցամաքեն: Ի դեպ, Ընկերությանը տրամադրվել է ջուր օգտագործման թույլտվություն միայն Սարավան և Գորհայք համայնքներից, մնացած աղբյուրից ջուր օգտագործման, ինչպես նաև Արփա գետ օգտագործված ջուրը լցնելու թույլտվություններ Ընկերությունը չունի:

2016 թվականին, դարձնելով Ջերմուկ քաղաքը ազդակիր համայնք, այնպես է արվել, որպեսզի բաց հանրային քննարկումներ տեղի չունենան, համոզված լինելով, որ Ջերմուկի բնակիչները դեմ են հանքավայրի գործարկմանը, քանի որ նրանց ապրուստի միակ աղբյուրն է տարվա մեջ 2-3 ամիս իրենց բնակարանները հանգստացողներին վարձակալությամբ հանձնելը, դեղաբույսերի վաճառքը և բնակչությունը հիմնականում աշխատում է առողջարաններում և հանքային ջրի գործարաններում, իսկ հանքի առկայության դեպքում Ջերմուկ հանգստանալու և բուժվելու մեկնողների թիվը կտրուկ կնվազի, ինչը անմիջապես կազդի 5000 բնակիչ ունեցող քաղաքի բնակիչների կենսամակարդակի վրա: Արդեն երկու առողջարան փակվել է /տրվել են վարձակալությամբ Ընկերությանը/ և 100-ից ավել Ջերմուկի բնակիչներ դարձել են գործազուրկ: Հանգստացողների համար պակասել են մահճակալների թիվը, հետևաբար, ավելի քիչ հանգստացող կայցելի Ջերմուկ, համապատասխանաբար կնվազեն սպասարկող և մատակարար ընկերությունների ու ֆերմերների եկամուտները:

Հանքի գործարկումը Ջերմուկ քաղաքից 7 կմ հեռավորության վրա հակասում է ՀՀ օրենսդրության մի շարք նորմերին, որոնք պետք է հաշվի առնվեր ՀՀ բնապահպանության փորձագետների կողմից և տրվեր փորձագիտական բացասական եզրակացություն: Այսպես, ՀՀ Հողային օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն. «2. Բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների տարածքներում բնակչության հիվանդությունների կանխարգելման ու բուժման կազմակերպման համար բարենպաստ սանիտարական և բնապահպան

պահանջներն ապահովելու նպատակով օրենսդրությանը համապատասխան սահմանվում են սանիտարական (լեռնային սանիտարական) պահպանության գոտիներ:» Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն. «Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրա մասը, որը`

- 1) պարունակում է **բնական բուժիչ ռեսուրսներ**. /տեղա են Ջերմուկի հանքային ջրերը, իմ խմբագրությունը/
- 2) գտնվում է **առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների** կազմում. /գտնվում է Ջերմուկ ջրաբանական արգելավայրի տարածում, ինչը բնական հատուկ պահպանվող տարածք է, իմ խմբագրությունը/
- 3) գտնվում է **առողջարանների, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող վայրերի հարևանությամբ**.
- 4) հանդիսանում է **արժեքավոր տեսակի ձկների ձվադրման և ձմեռման վայր**.
- 5) հանդիսանում է **արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս**:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը:»

ՀՀ Կառավարության 18.09.2008թ. «Ջերմուկ քաղաքը զբոսաշրջության կենտրոն հայտարարելու մասին» հ.1064-Ն որոշմանը, որտեղ նշված է. «4. Առողջարանային ռեսուրսներով հարուստ Հայաստանում Ջերմուկ քաղաքն իր ուրույն տեղն ու ավանդույթներն ունի:» Ամուլսարի հանքավայրի գործարկման արդյունքում կարող ենք կորցնել Ջերմուկի հազվագյուտ հանքային ջրերի աղբյուրները /պայթեցումների, բարձր սեյսմիկ ռիսկայնության, շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում/, աղտոտվել և առողջարանային, զբոսաշրջության և հանգստի համար ոչ պիտանի դարձնել Ջերմուկի կուսական բնությունը` օդի, ջրերի, հողի աղտոտման և բարձր ճառագայթման հետևանքով: Ընկերությունը` ԲՄԱԳ-ում նշում է, որ համայնքները կկրեն փոշու, աղմուկի և զարշահոտության ազդեցություն: Փոշին և աղմուկն արդեն առկա են շինարարության փուլում` ինչի մասին բազմիցս խոսել են ջերմուկցիները:

Արդյունքում, ոչ թե կավելանան Ջերմուկի այցելուները և զբոսաշրջիկները, ինչպես ծրագրված է վերը նշված որոշմամբ, այլ կնվազեն: Առողջապահությունը, հանգիստը, զբոսաշրջությունը և հանքարդյունահանությունը համատեղելի չեն: Հետևաբար, պետությունը պետք է որոշի` թե որ ճյուղին է նախապատվություն տալիս:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի /ՄՖԿ/ Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի /ՀԱՊԽ/ Համապատասխանության հետաքննության 19.06.2017թ. զեկուցագրում նշված է որ «ՄՖԿ-ն երաշխիքներ չունի, որ.

կարող են մեղմվել «ազդեցությունները, որոնք կարող են ազդել Ջերմուկի բրենդի վրա, որպես տուրիստական կենտրոնի, ինչպես օրինակ պայթյունների աղմուկը, տեսողական խանգարումները, և ավելի ընդհանուր ընկալումները, որոնք բխում են քաղաքին նախագծի մոտիկության հանգամանքից:» Ջերմուկի բրենդի վրա ազդեցությունը ընդհանրապես չի ուսումնասիրվել և գնահատվել, ինչը հսկայական վնաս կպատճառի Հայաստանի տնտեսությանը և հեղինակությանը, տեղի բնակչությանը, մոտակա գյուղերի ֆերմերներին և ընկերություններին:

Բացի այդ, Ամուլսարի հանքի գործարկումը կառաջացնի լուրջ սոցիալական, դեմոգրաֆիկական, առողջապահական, հասարակական կարգի պահպանման և այլ խնդիրներ: Ինչպես նշված է Ընկերության ԲՄԱԳ-ում. «նման ծրագրերի ընթացքում առաջացած սոցիալական խնդիրները ներառում են՝ ակոնոլի օգտագործման մակարդակի, մարմնավաճառության և դրա հետ կապված սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, ինչպես նաև հանցագործությունների և բռնությունների աճ:» Այս հանգամանքների մասին ՇՄԱԳ-ում նշված չէ, հետևաբար, այն նույնպես չի գնահատվել: Այս պարագայում, ինչպես կարելի է պատկերացնել առողջարանային քաղաքի բնականոն կյանքը և նորմալ զարգացումը:

ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հ.1059-Ս որոշման համաձայն «Ջերմուկ» ազգային պարկը պետք է ստեղծվի 2017-2020 թթ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ ՀՀ ԳԱԱ-ի և ՎԲՀ-Հայաստանի /WWF/ համաձայնությամբ՝ ՀՀ պետական բյուջեի և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրների ֆինանսական միջոցների հաշվին: ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվել է «Ջերմուկ» ազգային պարկ ստեղծելու մասին միջնաժամկետ ծախսային ծրագիրը: ՀՀ Կառավարության կողմից հաստատված Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարության մեջ նշված է.«Ջերմուկ» ազգային պարկի ստեղծմամբ կմիավորվեն «Հերիերի նոսրանտառային», «Ջերմուկի անտառային» և «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրերը: Դա հնարավորություն կընձեռնի՝ ապահովելու էկոհամակարգերի ամբողջականության պահպանությունը և աջակցելու ազգային պարկի պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը, խթանելու զբոսաշրջության զարգացմանը և բարձրացնելու բնակչության կենսամակարդակը: «Ջերմուկ» ազգային պարկի և դրա բուֆերային գոտու սահմանները շատ մոտ են գտնվելու Ամուլսարի ոսկու հանքին և ընդգրկելու են հանքարդյունահանման արդյունքում աղտոտված տարածքներ, ինչը կխախտի ազգային պարկի պահպանության ռեժիմը: Այժմ նույնպես խախտվում է երեք արգելավայրերի պահպանության ռեժիմը: Այսպիսով, հանքարդյունահանումը Ամուլսարի ոսկու հանքում և «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծումն ու տուրիզմի զարգացումը անհամատեղելի ծրագրեր են:

### **3. Գնդեվազ, Կեչուտ, Գորհայք և Սարավան համայնքների վրա ազդեցությունը և իրավական կարգավորումները**

Ընկերության ներկայացուցիչները, նախկին քննարկումների ժամանակ, հերքում էին, որ հանքավայրը մոտ է գտնվում գուղական բնակավայրերին և պնդում էին, որ որևէ բացասական ազդեցություն չի ունենա այդ գյուղերի շրջակա միջավայրի և նրանց բնակիչների սոցիալական վիճակի վրա: Այժմ ԲՄԱԳ-ում նշված է. «Հանքավայրը գտնվում է Գնդեվազ և Սարավան գյուղերի արտոնների տարածքի վրա, իսկ Հանքի տեղամասը գտնվում է գյուղական, բարձրադիր տարածքում: Հանքի տարածքի մեծ մասը մարգագետնային հողեր են, որոնք օգտագործվում են անասունների արածեցման նպատակով՝ բացառությամբ ԿՏՀ-ի և փոխակրիչի մի հատվածի տարածքի, որոնք գտնվում են ցածրադիր տարածքում՝ Գնդեվազ և Սարավան գյուղերի մոտակայքում մասնավոր և համայնքային հողերում:» Այսինքն,

ցիանիդային մեթոդով ոսկու կորզման գործարանը գտնվելու է հենց Գնդեվազ գյուղի մեջ՝ 2016թ. հատված ծիրանի այգիների տարածքում, ուր մեքենաներով տեղափոխվելու է հանքաքարը: Հաշվի առնելով, որ ազդակիր գյուղական համայնքների բնակչության ապրուստի հիմնական աղբյուրը անասնապահություն է և պտղաբուծությունը /հիմնականում՝ ծիրանի արտադրությունը/, ուստի հանքարդյունահանման արդյունքում արոտավայրերը կոչնչանան, այգիների մի մասը արդեն հատվել են, մյուս մասն էլ կաղտոտվեն և բերքը ոչ պիտանի կդառնա: Միայն Գնդեվազում 152 հա ընդհանուր տարածքով մոտ 274 մասնավոր հողակտոր դուրս է բերվելու գյուղ մթերքի արտադրությունից և անպիտան է դառնալու հետագա օգտագործման համար, հետևաբար, բնակչությունը կզրկվի իր հիմնական ապրուստի միջոցներից: Փաստորեն, միայն Գնդեվազում շուրջ 1370 /274x5=1370/ մարդ կզրկվի իր ապրուստի միջոցից, կմնա առանց աշխատանք: Փոխարենը խոստանում են բացել ընդամենը 800 աշխատատեղ ըստ 2016թ. հանրային քննարկումների հայտարարության /2014թ. խոստացել էին 400 աշխատատեղ/: Կեչուտի բնակիչները ամբողջությամբ մնացել են առանց հիմնական ապրուստի ,իջոցի և աշխատանքի, քանի որ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, իսկ իրենց արոտները Ամուլսարում էր, կունենան նաև իրացման խնդիր՝ Ջերմուկում հանգստացողների թվի կրճատմամբ:

Ամուլսարի հանքի գործարկման հետևանքով կախտոտվեն գյուղերի հողերը, ջրերը և մթնոլորտային օդը: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն. «Արգելվում է բնակավայրերում տերրիկոնների, հանքակույտերի և լցակույտերի տեղափոխումը, արդյունաբերական թափոնների, արտադրական, կենցաղային աղբի և մթնոլորտային օդը փոշով, վնասակար գազերով և գարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող այլ թափոնների պահեստավորումը, ինչպես նաև ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և բնակավայրերի տարածքներում նշված թափոնների այրումը:» Մինչդեռ, համաձայն նոր ներկայացրած փաստաթղթերի, հանքավայրի մոտ գտնվող համայնքները կրելու են փոշու, աղմուկի և գարշահոտության ազդեցություն: Իրականում այդ ազդեցությունը արդեն առկա է:

Նույն Օրենքի 30-րդ հոդվածում նշված է. «Օգտակար հանածոների արդյունահանումը, պայթեցման աշխատանքները, տերրիկոնների, հանքաշեղջերի և թափոնների տեղափոխումն ու շահագործումը պետք է կատարվեն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մարմինների, ինչպես նաև մյուս մարմինների հետ համաձայնեցված՝ մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու կամ կրճատելու վերաբերյալ կանոնների պահպանումով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:» Փորձաքննությանը ներկայացված նյութերում բացակայում են մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու միջոցառումներ: Աշխատանքային խմբի քննարկումների ընթացքում պարզվեց, որ Ընկերությունը չունի արտանետումների թույլտվություն և չի կատարում համապատասխան վճարումներ, ինչը պետք է արվեր շինարարական աշխատանքներ սկսելուց հետո 7-րդ օրից սկսած:

Անհրաժեշտ է նշել, որ դեռ շինարարության փուլում ընկերությունը 3 անգամ վնասել է Գնդեվազ գյուղի խմելու ջրի խողովակը, գարնանային վարարումների ժամանակ արդեն իսկ մերկացրած լեռնալանջերից եղել է ուժեղ էրոզիա և ցեխաջրերը լցվել են գնդեվազցիների արոտավայրեր ու հողահանդակներ: Բացի այդ կույտային

տարրավագման հարթակի տարածքից արտահոսած ցեխաջրերը լցվել են Արփա գետը՝ աղտոտելով այն և վնասելով գործող ձկնաբուծարանին:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի /ՄՖԿ/ Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի /ՀԱՊԽ/ Համապատասխանության հետաքննության 19.06.2017թ. զեկուցագրում նշված հանգամանքները: Մասնավորապես, նշված է, որ ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի, որ. «նախագծի ազդեցությունները Գնդեվազի համայնքի վրա ենթարկվել են ինտեգրված գնահատման, որը դիտարկել է «բոլոր կապակցված Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները», ինչպես պահանջվում է Կատարողական Չափանիշ 1-ով:» Այդպիսի գնահատում չի կատարվել նաև Կեչուտ, Գորհայք և Սարավան համայնքների համար:

#### **4. Ընդերքի մասին օրենսդրության խախտումները**

ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են հետևյալ փորձաքննությունները՝

- 1) ընդերքաբանական.
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության.
- 3) տեխնիկական անվտանգության:»

- Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Ընդերքաբանական փորձաքննության ենթակա են ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրումը: Ընդերքաբանական փորձաքննության նպատակն է գնահատել տեղեկության արժանահավատությունը, հաստատել կոնդիցիաներն ու պաշարները, եզրակացություն տալ պաշարների դուրսգրման հիմնավորվածության մասին:» Սակայն, ընդերքաբանական փորձաքննության արդյունքում չեն ստուգվել ներկայացված տվյալների արժանահավատությունը, քանի որ չեն պարզել ուղեկցող հանքանյութի առկայությունը, մինչդեռ Երկրաբանական ֆոնդում առկա են տվյալներ՝ Ամուլսարում ուրանի, թորիումի, ալումիտների, յարոզիտների, հազվագյուտ երկրային տարրերի առկայության մասին /տես՝ Գրոմովյան էքսպեդիցիա, Է.Սարուխանյան, Ա.Քոչարյան, Պ.Ալոյան և այլ/։ Մինչդեռ, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն. «1. Ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթներն են՝

- 6) ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովումը.»
- Տեխնիկական փորձաքննության եզրակացությունների մեջ, բացակայում են տվյալներ սեյսմիկ ռիսկերի, փայթեցումների արդյունքում երկրաշարերի և սողանքների առաջացման հավանականության, ինչպես նաև Ջերմուկի հանքային ջրերի աղբյուրների վրա ազդեցության մասին:
  - Երկրաբանական ուսումնասիրության լիցենզիաները տարբեր ժամանակ տրվել են ուսումնասիրվող տարբեր օգտակար հանածոների համար՝

քվարցիտ /15.03.06թ. հ.193 լիցենզիա/, ազնիվ մետաղներ /08.08.07թ. հ.42 լիցենզիա/, ոսկեբեր քվարցիտ /24.03.2009թ. էներգետիկայի նախարարության հ. 1389 տեղեկանք/:

- Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն. «1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը ներկայացվում է լիազոր մարմին:

2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը.

2) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը.

3) երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածո(ները).

4) ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, և հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով.

5) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը՝ համաձայն 39-րդ հոդվածի.

6) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալները.

7) դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը).

8) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը.

9) ներկայացված փաստաթղթերի ցանկը:»

Իսկ նույն օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված են օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Սակայն ընկերության կողմից դրանք ներկայացվել են ոչ լիարժեք: Օրինակ, չի ներկայացվել Ընկերության մասնագիտական աշխատանքային փորձի մասին տեղեկան, ինչը պահանջվում է նաև ՀՀ Կառավարության 28.03.2013թ. 367-Ն որոշմամբ /մետաղական հանածոների համար պահանջվում է հինգ տարվա մասնագիտական փորձ/: Չեն ներկայացվել նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ: Չեն ներկայացվել նաև Ընկերության 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճեն: Ընկերությունը միշտ վկայակոչում է, որ իր բաժնեմասերը պատկանում են Լիդիան Ինթերնեյշնլ կազմակերպությանը, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառել, որ 100% բաժնետոմսերը պատկանում են Լիդիան Ռեսուրսիզ Արմենիա Լթդ.-ին /գրանցման համարը 1031701, հասցեն՝ 875, 6 Քվոմար Թրեյդինգ Բիլդինգ, 3-րդ հարկ, Ռոուզ Թաուն, Տորտոլա, Բրիտանական /Վերջինիան կղզիներ/ /հիմք՝ 14.04.14թ. Ընկերության կանոնադրության 3.4 կետ/:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 60.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջի կատարման նպատակով յուրաքանչյուր ընդերքօգտագործող, նախքան ընդերքօգտագործման գործունեության մեկնարկը,

ընդերքօգտագործման թափոնների կառավարման, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար՝

1) մշակում է վթարների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և գործողության մեջ դնում դրա իրականացումն ապահովող անվտանգ կառավարման համակարգ.

2) մշակում է արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը՝ համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների.

3) իրականացնում է արտակարգ իրավիճակներին արձագանքելու ներքին ծրագիր՝ նշելով այն միջոցները, որոնք վթարի դեպքում ձեռնարկվելու են:» Սակայն, ուսումնասիրման ներկայացված փաստաթղթերում նշված փաստաթղթերը բացակայում են:

Ընկերությունը օգտագործելու է ոսկու կորզման ցիանիդային եղանակ, տարեկան 1000 տոննա /10 տարում՝ 10000 տոննա/ ցիանիդ է ներկրվելու Հայաստան, սակայն չեն ներկայացվել ցիանիդի ձեռք բերման, տեղափոխման, պահեստավորման հետ կապված ռիսկերից խուսափելու պլանը: ՇՄԱԳ-ում չկա տարավազման հարթակում գոլորշացման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտման և այն կանխելու միջոցառումների մասին գնահատումներ:

## **5. Բուսական աշխարհի մասին օրենսդրության խախտումները**

Նախկինում բոլոր քննարկումների ընթացքում «Գեոթիմ» ընկերության ներկայացուցիչները հերքում էին հասարակության և մասնագետների այն փաստարկները, որ հանքավայրի տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ: Սակայն, 2016թ. ներկայացրած ՇՄԱԳ-ում և ԲՄԱԳ-ում հստակ նշված է. «Կարձաժամկետ հեռանկարում, Ծրագրի իրականացումը կհանգեցնի Մ ա տ ն ու ն ի ծ ի ր ա ն ա վ որ բուսատեսակի կորստին», որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում, որպես խիստ վտանգված տեսակ, իսկ համաշխարհային մակարդակով այն դասակարգվում է «Վտանգված տեսակների» շարքում: Այնուհետ, նշված է. «Հայաստանի կառավարությունից ստացած թույլտվության շրջանակներում նախատեսվող բացահանքերի զբաղեցրած տարածքից բույսերն արդեն հավաքվել և տեղափոխվել են Սևանի բուսաբանական այգում հատուկ կառուցված ջերմատուն, որտեղ փորձարկումներ կկատարվեն հանքի փակումից հետո դրանց պոպուլյացիայի վերականգնման նպատակով լավագույն մեթոդները պարզելու նպատակով:» Ո՞վ պետք է պատասխան տա և ինչպե՞ս պետք է վերականգնվի պատճառված վնասը, եթե նշված բույսը չհարմարվի ջերմոցային պայմաններին և ոչնչանա:

Այս գործողությամբ խախտվել է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, համաձայն որի . «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը:»

Այսինքն, օրենսդիրը շեշտադրում է անում աճելավայրերի պահպանության կարևորության վրա, որը տվյալ դեպքում լրիվ ոչնչացվելու է: Ընկերության միջազգային փորձագետը և մասնագետները աշխատանքային խմբի անդամների հետ հանդիպման ժամանակ խոստովանեցին, որ իրենք, գիտակցելով, որ ՀՀ օրենսդրությամբ նման խիստ արգելք կա, դիմել են ՀՀ բնապահպանության նախարարություն այս հոդվածի դրույթներից խուսափելու ելք գտնելու խնդրանքով: Արդյունքում, ՀՀ Կառավարության 31.06.14թ. հ.781-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման» Կարգը /այսուհետ՝ Կարգ/: Նշված որոշումը և Կարգը ամբողջովին անօրինական է և անհապաղ պետք է ուժը կորցրած ճանաչվի: Մասնավորապես, ՀՀ Կառավարության նշված որոշման մեջ, որպես Կարգի ընդունման հիմնավորում նշված է. «Հիմք ընդունելով «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի «գ» ենթակետը և 24-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.» Այս դրույթը հակասում է Կարգի վերնագրին և բովանդակությանը: Մասնավորապես, Օրենքի 5-րդ հոդվածի «գ» ենթակետը սահմանում է. «Բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

գ) բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և օգտագործման կարգի սահմանում.» Այսինքն այդ Կարգի վերնագիրը պետք է շարադրված լիներ Օրենքում նշվածին համապատասխան և բովանդակությունը նույնպես պետք է համապատասխաներ դրան: Ինչ վերաբերում է Օրենքի 24-րդ հոդվածին, ապա այն սահմանում է. «Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը **թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, մշակության մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով՝** բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:» Դա պետք է կարգավորվեր ՀՀ Կառավարության այլ որոշմամբ: Ի դեպ, Օրենքի 24-րդ հոդվածում նշված բացառիկ դեպքերում օգտագործումը չի կանոնակարգվել նշված Կարգով: Այսպիսով, որպես Օրենքի 17-րդ բացառություն, 24-րդ հոդվածը թույլ է տալիս կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը բացառիկ դեպքում միայն **գիտահետազոտական, մշակության մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով:** Օրենքը արգելում է այդ բույսերը՝ այլ վայր տեղափոխել: Սակայն, ի խախտումն Օրենքի, ՀՀ Կառավարության նշված որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետում սահմանված է. «Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման



սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:» Այս դրույթը հակասում է նաև նույն Կարգի 2-րդ կետի դրույթներին. «2. Օբյեկտների և **դրանց աճելավայրերի** պահպանությունն ապահովում է վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը:»:

Բացի այդ, այն հակասում է, ինչպես նշված Կարգի 3-կետի 2-րդ ենթակետի դրույթներին, այնպես էլ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներին: Մասնավորապես, արգելոց կամ ազգային պարկի արգելոցային գոտի արգելվում է որևէ բույսի տեղափոխումը: Ինչ վերաբերում է բուսաբանական անգիներին, ապա դրանք բնական պայմաններ չեն բույսերի համար, հետևաբար հակասում են ինչպես Օրենքի 24-րդ հոդվածին, այնպես էլ սույն Կարգի վերնագրին և հիմնական դրույթներին:

Նշված Կարգը հակասում է նաև Կենդանաբանության պահպանության և Վայրի բնության պահպանության /Բեռնի/ կոնվենցիաների պահանջներին /տես՝ սույն Եզրակացության 11-րդ կետ/: Այսպիսով, ակնհայտ է, որ նշված Կարգը ընդունվել է ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի կոպիտ խախտումներով, ինչը էական վնաս է պատճառում, ինչպես Հայաստանի, այնպես էրկրագնդի կենսաբազմազանությանը:

Եթե նույնիսկ ընդունենք, որ Ընկերությունը ղեկավարվել է նշված Կարգով, ապա իր կողմից չեն պահպանվել նույնիսկ այդ Կարգում նշված մի շարք պահանջներ: Մասնավորապես.

- Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն « 3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելու դեպքում հիմնադրությային փաստաթղթի, նախատեսվող գործունեության հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝
- 1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.» Ընկերության կողմից նման ուսումնասիրություն չի կատարվել, ինչի մասին նշված է նաև Կենսառեսուրսների կառավարման գործակալության 01.09.14թ. հ.22-8/100 գրության մեջ: Նշված գրությամբ պահանջվել է ներկայացնել՝ «տարածքի բուսատեսակների /ենթատեսակների/ ցանկը» «դասակարգված՝ ըստ ընտանիքների, նշելով տեսակների հեղինակները, ինչպես նաև ներառելով բույսերի հայերեն անվանումները», տեղեկատվություն «տարածքում առկա էնդեմիկ տեսակների վերաբերյալ, նախատեսելով համապատասխան միջոցառումներ ուղղված վերջիններիս պահպանությանը»

/օրինակ՝ Tulipia Julia K.Koch տեսակը, որը Հարավային Կովկասի էնդեմիկ տեսակ է/, միաժամանակ նշված է, որ «արժանահավատ չէ այն փաստը, որ ուսումնասիրությունների ժամանակ Գնդեվազ համայնքի տարածքում և նրա շրջագայքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ Cicer Anaticum Alef. և Acantholimon caryophyllaceum Boiss տեսակները»: Այսպիսով, Կարմիր գրքում նշված բույսերը կարող են ոչնչանալ՝ Ընկերության կողմից դրանք չուսումնասիրելու և գործունեություն իրականացնելու արդյունքում:

Կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն. «4. Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում **պահպանվող գոտիներ**, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես **սահմանափակում են** առանձնացված պահպանվող գոտիներում **տնտեսական գործունեության որոշ տեսակներ**, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.» Ինչը չի արվել Ընկերության կողմից: Եթե այդ միջոցները անհնարին էր իրականացնել, Ընկերությունը պետք է հիմնավոր պատճառաբանություն ներկայացներ, որպեսզի այդ տեսակները իրավունք ունենար տեղափոխել, այն էլ ըստ Կարգի նշված կետի 3-րդ ենթակետի. «բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:» Ինչը նույնպես չի արվել Ընկերության կողմից: Բացի այդ, Կարգը 6-րդ կետի համաձայն. «6. Բույսերի տեղափոխման միջոցառումներն առնվազն ներառում են՝

1) տեղափոխման ռիսկերի գնահատումը.

2) հիմնավորումներ այն մասին, որ տեղափոխվող տեսակները նոր աճելավայրի համար վտանգ չեն ներկայացնում, իսկ վտանգ ներկայացնելու դեպքում՝ հիմնավորումներ այն մասին, որ տեղափոխվող տեսակներից սպասվող հնարավոր օգուտները գերազանցում են նոր աճելավայրին հասցվելիք հնարավոր բոլոր վնասները.

3) տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից շարունակական ուսումնասիրությունների և սույն կարգի 5-րդ կետով նախատեսված պայմանագրում ներառված համապատասխան միջոցառումների իրականացման պարտավորություն՝ մինչև նոր աճելավայրում տվյալ բույսի կենսունակ և ինքնուրույն պոպուլյացիայի ձևավորումը:» Ինչը նույնպես չի արվել Ընկերության կողմից:

Այսպիսով, Ընկերության վկայակոչած Կարգը նույնպես խախտվել է իր կողմից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդ. համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության են ենթակա բուսական աշխարհի **բոլոր օբյեկտները**», այլ ոչ միայն Կարմիր գրքում գրանցված տեսակները: Ընկերությունը նշում է. «Ծրագրային գոտու սահմաններում առկա են մարգագետնային բուսականության մեծ տարածքներ, որոնք ներկայացնում են միջազգային, այդ թվում՝ ՄՖԿ-ի և ՎՁԵԲ-ի չափանիշներով սահմանված՝ բնական

կենսամիջավայրերի” հարուստ նմուշներ, և որոնք պահանջում են հատուկ ուշադրություն:» Մակայն բույսերի մյուս տեսակների և դրանց պահպանման մասին ընդհանրապես խոսք չկա, չի նկարագրված տարածքի բուսական աշխարհը ըստ տեսակային կազմի, այն էլ այն դեպքում, երբ Ընկերությունը ուղղակի նշում է, որ լանդշաֆտների անդառնալի կորուստներ կլինեն: Իրականում, պետք է տեղափոխվեին Կարմիր գրքում չընդգրկված տեսակները, քանի որ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդվածի և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն «արգելվում է ցանկացած գործունեություն» այդ թվում հանքարդյունահանություն այն տարածքներում, որտեղ կան «Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր», հետևաբար, այդ բույսերի տեղափոխման մասին որևէ Կարգում խոսք անգամ չի կարող լինել:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն. «Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրա մասը, որը

5) հանդիսանում է արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը:» Ընկերությունը ըստ նախագծի պետք է օգտագործի տարածքում գտնվող ջրի բազմաթիվ աղբյուրներ, որոնց մի մասը կցամաքեն, ինչպես նաև կեղտաջրերով աղտոտվելու է տարածքը և կառուցվելու են կեղտաջրերը կլանող ջրհորներ:

## 6. Կենդանական աշխարհի մասին օրենսդրության խախտումները

Ընկերության ներկայացուցիչները նախկինում՝ քննարկումների ժամանակ հերքում էին, որ հանքի տարածքում կան Կարմիր գրքում գրանցված կենդանիներ: Այժմ ԲՄԱԳ-ում նշված է. «Միջազգայնորեն ճանաչված Գորայքի և Ջերմուկի կարևորագույն թռչնաբանական տարածքները (ԿԹՏ) սահմանակից են Ծրագրի ազդակիր տարածքին համապատասխանաբար հարավարևելյան և հյուսիսարևմտյան մասերում: Այս տարածքները Թռչունների պաշտպանության կազմակերպության (Birdlife International) կողմից նշվել են որպես թռչունների պահպանության համար կարևոր կենսամիջավայր: Գորայքի ԿԹՏ-ում նշված հիմնական տեսակը տափաստանային հողմավար բազեն է, որի միակ բազմացող զաղուրը Հայաստանում է՝ Գորայք գյուղի մոտ: Վերոհիշյալ երկու ԿԹՏ-ներն նշվել են նաև սովորական գիշանգղի համար»:

Բացի այդ նշված է. «Ծրագրի տարածքում հայտնաբերվել են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված մի քանի այլ տեսակներ, այդ թվում՝ իժի երկու տեսակ, բզեզի երկու տեսակ, թիթեռի մեկ տեսակ, թռչունների առնվազն 14 տեսակ և կաթնասունների մեկ տեսակ:» Նշելով Կարմիր գրքում գրանցված կենդանիների մի քանի տեսակներ, այնուամենայնիվ ոչ բոլոր տեսակներն են թվարկված: Օրինակ, որպես կաթնասուն նշված է միայն գորշ արջը, իսկ «Կենդանիների աշխարհ» ՄՊԸ- ի կողմից 2006-2012թթ.հաշվետվության մեջ նշված է, որ Ջերմուկի տարածքում բնակվում են Կարմիր գրքում գրանցված կաթնասուն կենդանիների հետևյալ տեսակները՝ գորշ արջ, բեզոյան այծ, հայկական մուֆլոն: Մակայն, բացի գորշ արջից, մնացածի մասին Ընկերությունը

ուսումնասիրություններ չի կատարել: «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդ. համաձայն. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը»:

Կարելի է եզրակացնել, որ բոլոր փորձաքննական եզրակացությունները օրինական չեն, քանի որ Ընկերության կողմից չեն ներկայացվել հավաստի տվյալներ կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ և դրանք չեն գնահատվել, իսկ նոր ներկայացրած փաստաթղթերը նույնպես թերի են:

Ընկերությունը ընդունում է, որ «Ծրագիրը կհանգեցնի բնական բուսականության կորստի, այդ թվում՝ ինչպես Մատնունի ծիրանավորի, այնպես էլ Կովկասյան գորշ արջի կենսամիջավայրերի կորստի, որոնք միջազգային ստանդարտների համաձայն համարվում են կրիտիկական կենսամիջավայրեր: Հանքարդյունահանման հետ կապված աղմուկի և փոշու նստվածքագոյացման և կենդանիների տեղաշարժի խոչընդոտման արդյունքում նաև կենսամիջավայրերի որակի վատթարացում տեղի կունենա:» Բացի այդ ընկերությունը հաստատում է այն փաստը, որ «ակնհայտ է, որ հանքի շահագործումից հետո վերականգնմանն ուղղված հնարավոր ջանքերից անկախ, Ամուլսար լեռան ներկայիս բնական կենսամիջավայրերի ամբողջական և լիակատար վերակազմումը հնարավոր չէ»:

Խախտվել է նաև ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի արգելող նորմը: Մասնավորապես, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-մասի 3-կետի համաձայն. «1. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

3) Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:՝ Այս նորմը իմպերատիվ է և որևէ կերպ հնարավորություն չի տալիս դրական փորձագիտական եզրակացություն տալու և այդ տարածքում հանք գործարկելու:

Ջրային օրենսգրքի 104-րդ հադվածի համաձայն. «Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրա մասը, որը

4) հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման և ձմեռման վայր.

5) հանդիսանում է արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս:

Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը»:

Վայրի բնության հիմնադրամի՝ «Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ՇՄԱԳ-ում և դրա հավելվածներում ներկայացվող կենսաբազմազանության և կենսաբազմազանության փոխհատուցման վերաբերյալ» 12.05.2017թ. մասնագիտական կարծիքում: Մասնավորապես, նշված է. «Ամուլսարի ոսկու հանքի

տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ: Բացահանքի և դրան կից կառույցների շահագործումը հանգեցնելու է այդ տեսակների ապրելավայրերի կորուստի կամ առնվազն վատթարացմանը և անխուսափելիորեն կրճատելու է դրանց թվաքանակը», ինչը ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի, «Կենդանական աշխարհի մասին» և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքների, «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» /Բեռն/ և «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիաների կոպիտ խախտում է:

Նշված է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված ՇՄԱԳ-ում, կենսաբազմազանության ուսումնասիրություններում և կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումներում՝ Հավելված 11, բավարար ուշադրությամբ չեն նշվել և չեն ուսումնասիրվել ՀՀ Կարմիր գրքում գրանցված մի շարք տեսակներ՝ ջրասամույրը (*Lutra lutra*, VU) և Շելկովնիկովի կուտորան (*Neomys schelkovnikovi*, EN), սիրիական սխտրագորտը (*Pelobates syriacus* VU), իսկ 137 տեսակի թռչուններից, որոնցից 30–ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում, նշվել է միայն 14-ը:

Նշված է, որ «Կենսաբազմազանության փոխհատուցման հավելվածում՝ Հավելված 11, նշվում են միայն ԲՊՄՄ Կարմիր ցուցակի 14 տեսակ: Սակայն Աղյուսակ 2-ում նշվում է միայն մեկ տեսակ՝ Տափաստանային հողմավար բազե (*Falco naumanni*), որի համար որպես փոխհատուցում առաջարկվում է միայն մոնիթորինգ՝ 200,000 USD գումարով: ՀՀ Կարմիր գրքում գրանցված այլ թռչնատեսակների փոխհատուցման միջոցառումները բացակայում են:» Միաժամանակ հայտնաբերվել է Ապոլլոն (*Parnassius apollo*) տեսակի թիթեռը, որը նույնպես ընդգրկված է ՀՀ կարմիր գրքում, ընդգրկված է նաև միջազգային Կարմիր ցուցակում (IUCN): Նշված չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A1cde: Տեսակը ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II–ում, սակայն այն չի նշված եղել փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերի մեջ:

Միաժամանակ նշված է. «Ակնհայտ է, որ..... ծրագրի տարածքում **բնական կենսամիջավայրը ամբողջությամբ վերացվելու է:** Միևնույն ժամանակ ցանկացած փոխհատուցման միջոցառում, այդ թվում «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծումը, կամ որևէ այլ դեգրադացված տարածքների վերականգնումը երբևէ չեն ստեղծի այն բնական կենսամիջավայրերը իրենց բնորոշ կենսաբազմազանությամբ և տեսակների միջև բարդ կապերով, որոնք ծրագրի իրականացման արդյունքում կկրեն **մշտական և անշրջելի ազդեցություններ:**»

Վերը նշված գործոնները Ընկերության կողմից միտումնավոր թաքցվել են, իսկ փորձաքննություն իրականացնող մարմինը այն չի գնահատել:

## 7. Պատմամշակութային արժեքների պահպանության մասին օրենսդրության

### խախտումները

Ընկերության ներկայացուցիչները՝ նախկինում քննարկումների ժամանակ, բազմաթիվ անգամ հերքել են, որ հանքի տարածքում կան դամբարաններ, պատմամշակութային արժեքներ, այժմ ընդունելով այդ փաստը նվազեցնում են դրանց նշանակությունը: ԲՄԱԳ-ում նշված է. «ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են 81 հավանական հնագիտական տարածքներ, որոնք ամենայն հավանականությամբ, Ծրագրի գործողություններից ազդեցություն կկրեն, չնայած դրանցից ոչ մեկը, ըստ հայաստանյան և միջազգային փորձագետների, մեծ կարևորություն չի ներկայացնում:» Ինչի՞ հիման վրա և ի՞նչ լիազորությամբ է Ընկերությունը գնահատում 81 հավանական հնագիտական տարածքների կարևորությունը և ոչ կարևոր համարում, պարզ չէ: Մինչդեռ, ՀՀ Պատմամշակութային ժառանգություն գիտահետազոտական կենտրոնի գրության համաձայն. «հայտնաբերվել է բնակատեղիներ, դամբարանադաշտեր և գերեզմանոց: Նշված արժեքները ներկայացվել են Մշակույթի նախարարություն հուշարձանի կարգավիճակ տալու համար:

Դամբարանադաշտերը գտնվում են Կեչուտ գյուղից 10 կմ հարավ-արևելք Ամուլսարի ստորոտին, Գնդեվազ գյուղից 18-23 կմ հեռավորության վրա՝ Ամուլսարի Էրատո, Տիգրան և Արտավազ լեռնագագաթներին:» ՀՀ հողային օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն. «1. Պատմական և մշակութային հողեր են համարվում պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրի պահպանության, ... դամբարանադաշտերի և պատմական ու մշակութային այլ արժեքներով զբաղեցված հողամասերը: 2. Պատմական և մշակութային հողամասերի վրա արգելվում է դրանց նպատակային ու գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն»:

**ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն.** «1. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

- 1) գերեզմաններ.
- 2) բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ.»

Պատմամշակութային հուշարձաններով զբաղեցրած տարածքները հանքարդյունահանման նպատակով տրամադրելը խախտում է ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածը, որտեղ նշված է. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»:

Ընկերության մասնագետների հայտարարությամբ, այդ տարածքներում ԳԱԱ Հնագիտության ազգային և ազգագրության ինստիտուտի կողմից պեղումներ են արվել և շատ արժեքավոր իրեր են գտել, սակայն տարածքը չի վերցվել պետական պահպանության տակ և այն ոչնչացվելու վտանգի տակ է:

## 8. Քաղաքաշինության մասին օրենսդրության խախտումները

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդ. համաձայն. «Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:»

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն. «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ կարող են առանձնացվել՝

բ) Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքների տարածքներում.

դ) մեկից ավելի վարչատարածքային միավորների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտների տարածքներում.:»

Սույն հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործունեության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 26.06.2009թ. հ. 792-Ն որոշմամբ:» Նշված որոշման 9-րդ կետով սահմանված է. «9. Հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական զարգացման հիմնական փաստաթղթերն են՝

1) քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերը.

2) գոտևորման նախագծերը (ներառյալ քաղաքաշինական կանոնադրությունը).

3) պատմամշակութային հիմնավորման ու պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը.

4) սահմանների նկարագիրը.

5) առանձին օբյեկտների և համալիրների կառուցապատման սխեմաներն ու ճարտարապետաշինարարական նախագծերը:» Պարզ չէ, արդո՞ք այդ փաստաթղթերը առկա են և Ընկերությունը շինարարության համար ստացել է պահանջվող բոլոր թույլտվությունները:

**9. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փո գփրձաքննության մասին» և «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքների խախտումներ**

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փոքրձաքննության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Գնահատումը և փոքրձաքննությունը ելնում են՝

1) առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքից.

2) բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջներից.

3) էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և կենդանական ու բուսական աշխարհի պահպանման անհրաժեշտությունից՝ նկատի ունենալով ներկա և ապագա սերունդների շահերը:» Իսկ գնահատման նպատակն է նույն Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. «շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության

իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը»:

- **«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն.** «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական մարմինների կողմից հատուկ կարևորության խնդիրների վերաբերյալ որոշումներ կարող են կայացվել միայն Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասնագիտական փորձաքննության տվյալների հիման վրա տրված դրական եզրակացության առկայության դեպքում:

Պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում նաև պետական մարմինների հանձնարարությամբ, Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության նախաձեռնությամբ, ինչպես նաև հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, բնակչության կողմից բարձրացված սանիտարահամաճարակային, անվտանգության ապահովման հետ կապված հարցերի կապակցությամբ»:

Ամուլսարի ծրագրի սանիտարահիգիենիկ փորձաքննություն չի անցկացվել:

## 10. Մարդու իրավունքների խախտումներ

Խախտվել են մարդու բնական՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու և հիմնարար՝ սեփականության, տեղեկատվության, որոշումների ընդունմանը մասնակցության, արդարադատության մատչելիության և այլ իրավունքները: Եզրակացության ծավալի սահմանափակության պատճառով նշվում են դրանցից մի քանիսը:

- ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբակտելի հիմքն է:  
2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:



3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»

- «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. «Քաղաքացիներն ունեն՝ 1) բարենպաստ շրջակա միջավայրի և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավունք.»
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի ձեռնարկի 11-րդ Արձանագրության 8-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:»

## 11. Միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի խախտումները

- Օրհուսի Կոնվենցիա

Օրհուսի կոնվենցիայով սահմանված է երեք հիմնարար իրավունք՝

- տեղեկատվության մատչելիության,
- բնապահպանական որոշումներին հասարակության մասնակցության
- արդարադատության մատչելիության:

Տվյալ դեպքում այդ երեք իրավունքներն էլ կոպտորեն խախտվել են:

Նախ, ոչ բոլոր հնարավոր ազդեցության ենթակա համայնքներն են ճանաչվել ազդակիր:

Օրինակ, Ամուլսարի հանքավայրի դեպքում Կեչուտը ի սկզբանե ճանաչվել էր, որպես ազդակիր համայնք, սակայն Ջերմուկը չէր ճանաչվել՝ ազդակիր համայնք: Այնուհետ, ծրագրի իրականացնողը պարզել է, որ Կեչուտ գյուղը մտնում է Ջերմուկ քաղաքի վարչատարածքային կազմում, Կեչուտը դադարել է լինել ազդակիր: Ընկերությունը բոլոր փորձագիտական եզրակացությունները ստացել է, առանց Ջերմուկ քաղաքում և Կեչուտ գյուղում հանրային քննարկումներ կազմակերպելու, զրկելով նշված համայնքների բնակչությանը տեղեկացված լինելու և որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքից: Այդ կապակցությամբ Ջերմուկի բնակիչները դիմել են ՀՀ Վարչապետին՝ Ջերմուկը ազդակիր համայնք ճանաչելու պահանջով, մերժում ստանալուց հետո դիմել են ՀՀ Վարչական դատարան՝ Ջերմուկ քաղաքի բնակչությանը և իրենց ազդակիր ճանաչելուն պարտավորեցնելու պահանջով, սակայն ՀՀ Վարչական դատարանը հայցը չի ընդունել վարույթ, պատճառաբանելով, ոչ պատշաճ հայցվորի կողմից է ներկայացված, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը ուժի մեջ է թողել ՀՀ Վարչական դատարանի որոշումը, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ վերադարձրել է բողոքը: Մեկ այլ գործով՝ Ամուլսարի ծրագրի

փորձաքննական եզրակացությունը անվավեր ճանաչելու պահանջով, բնապահպանական հասարակական կազմակերպությունը ճանաչվել է ոչ պատշաճ հայցվոր և զրկվել է արդարադատության մատչելիության իրավունքից:

2016թ. փորձաքննության նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունն ներկայացրած ծրագրի փոփոխության ՇՄԱԳ-ում Ջերմուկը նշվել է որպես ազդակիր համայնք, սակայն Ջերմուկ քաղաքում հանրային քննարկումներ չեն անցկացվել, զրկելով Ջերմուկի և Կեչուտի բնակիչներին, որոնց հիմնական ապրուստի միջոցը անասնապահությունն է և անասունները արածեցվում են հենց այդ տարածքներում, որոշումների ընդունմանը մասնակցություն ունենալու իրավունքից: Փորձաքննություն իրականացնող մարմինը պնդում է, որ Ջերմուկի բնակիչների համար անց է կացվել հանրային քննարկում Սարավան գյուղում և Ջերմուկի քաղաքապետը դրա մսին տեղեկացվել է: Որոշումների ընդունմանը քաղաքացիների մասնակցության իրավունքը ոչ թե պետք է իրականացվի ձևական, այլ այն պետք է լինի ռեալ, այսինքն, հանրային իշխանությունների կողմից պետք է ստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի քաղաքացին կարողանա ռեալ իրականացնի իր իրավունքը:

Հաշվի առնելով, որ Արփա և Որոտան գետերը, ինչպես նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները համաձայն «Սևանի մասին» ՀՀ օրենքի հանդիսանում են Սևանի ջրհավաք ավազանը, որտեղ արգելված է հանքարդյունահանում իրականացնել, հետևաբար, Գեղարքունիքի մարզի այն գյուղերը, որոնք օգտվում են Սևանա լճի ջրերից նույնպես ենթակա են հնարավոր ազդեցության և նույնպես պետք է ճանաչվեին ազդակիր համայնքներ:

Բացի այդ, Արփա և Որոտան գետերի ջրերից օգտվում են նաև Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքները, ինչպես նաև Սևանա լճի ջրերը օգտագործվում են Կոտայքի մարզի և Երևանի բնակիչները, հետևաբար իրենք նույնպես կարող են կրել հնարավոր ազդեցություն և պետք է ճանաչվեին ազդակիր համայնքներ, ինչը չի արվել և խախտվել նշված համայնքների անդամների իրավունքները:

Օրհուսի կոնվենցիայի պահանջների խախտման արդյունքում, Հայաստանը մի քանի զգուշացում է ստացել և նախազգուշացվել է՝ խախտումները կրկնվելու դեպքում, անդամության դադարեցման մասին:

- **Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա**

Ամուլսարի ծրագրով խախտվել է «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիան: Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

- **«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» /Բեռն/**

Խախվել է «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» /Բեռնի/ կոնվենցիան: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի քայլեր վայրի ֆլորայի, վայրի ֆաունայի և բնական միջավայրերի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականությունը իրականացնելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով վտանգված և խոցելի, հատկապես տեղական տեսակներին և վտանգված բնական միջավայրերին՝ համաձայն սույն Կոնվենցիայի դրույթների:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս, ինչպես նաև ադտոտման դեմ ուղղված իր միջոցառումներում պարտավորվում է հաշվի առնել վայրի ֆլորայի և ֆաունայի պահպանության հարցերը:»

- **«Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Կոնվենցիա /Էսպո/**

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Կողմերը անհատական կամ կոլեկտիվ կարգով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ և արդյունավետ միջոցները պլանավորված գործունեության արդյունքում ներգործվող զգալի վնասակար անդրսահմանային ազդեցության կանխման, ինչպես նաև դրա նվազեցման և վերահսկման համար:» Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն. «3. Ծագման Կողմն ապահովում է, որ, սույն Կոնվենցիային համապատասխան, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կատարվի մինչև 1-ին հավելվածում ընդգրկված՝ զգալի վնասակար անդրսահմանային ազդեցություն ներգործող պլանավորված գործունեության տեսակի իրականացման կամ իրականացումը թույլատրող որոշման ընդունումը:» Իսկ 7-րդ կետի համաձայն. «7. Սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումները կատարվում են, որպես նվազագույն պահանջ, պլանավորված գործունեության օբյեկտների մակարդակով:» Համապատասխանորեն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ

օրենքի /2014թ./ 5-րդ գլուխը /22-25 հոդվածներ/ կարգավորում է անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրույթային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության գնահատման և փորձաքննության կարգը: Սակայն, Ամուլսարի ծրագիրը չի անցել անդրսահմանային ազդեցության գնահատում և փորձաքննություն, ինչը Կոնվենցիա կողմ հանդիսացող հարևան Ադրբեջանին հնարավորություն կտա դիմել միջազգային դատարան վեճերի լուծման և վնասների հատուցման համար /Կոնվենցիայի 15-րդ հոդ. 2-րդ կետ/:

- **«Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա**

ՀՀ Կառավարության կողմից հավանություն է տրվել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների/ ներդրումին» /ՀՀ կառավարության 10.09.2015թ. նիստի հ.41 արձանագրություն/: Մասնավորապես, «Համալիր միջոցառումների կիրառմամբ ապահովել բոլոր կատեգորիայի հողերում օրգանական ածխածնի պահպանումը, կուտակումն ու պահեստավորումը և ընդգրկել այդ հաշվեկշռի ցուցանիշները Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող մեղման գործողություններում:» Ամուլսարի ծրագիրը իրականացնելիս, խախտվում է սույն Կոնվենցիայով Հայաստանի ստանձնած այս պարտավորությունը:

- **Անապատացման դեմ պայքարի մասին կոնվենցիա**

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Ձգտելով սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը, Կողմերը.

ա/ համալիր մոտեցում են ընդունում անապատացման և երաշտի Ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների նկատմամբ,

գ/ աղքատության արմատապես վերացմանն ուղղված ռազմավարություններն ինտեգրացվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների նվազեցման ջանքերի մեջ,

դ/ նպաստում են Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ազդեցության ենթարկված պետությունների միջև համագործակցությանը շրջակա միջավայրի պաշտպանության և հողային ու ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում, քանի որ այդ համագործակցությունը նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին:»

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «3. Միջոցառումների ազգային ծրագրերը կարող են, մասնավորապես, ներառել երաշտի հետևանքների նվազեցմանն ուղղված հետևյալ միջոցները կամ դրանցից մի քանիսը.

ա/ վաղ ազդարարման համակարգերի ստեղծում և/կամ ամրապնդում՝

գ/ պարենային անվտանգության համակարգերի ստեղծում և/կամ ամրապնդում՝ կախված հանգամանքներից, ներառյալ պահպանման և իրացման միջոցները, հատկապես՝ գյուղական շրջաններում,

ե/ ռոռզման կայուն ծրագրերի մշակում ինչպես հողագործության, այնպես էլ անասնապահության կարիքների համար:»

Ամուլսարի ծրագրով դեգրադացվելու են լեռնային տարածքներ, արդյունաբերական նպատակներով օգտագործվելու մեծ քանակության ջուր, ինչը կնպաստի երաշտին, կզրկի գյուղատնտեսությունը ռոռզման ջրից, կավելացնի աղքատությունը, ինչը Կոնվենցիայի պարտավորությունների խախտում է:

- **«Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա»**

Այս Կոնվենցիան հիմնվել է այն գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդշաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները. Լանդշաֆտներն են ձևավորում երկրի ինքնատիպ պատկերը, արտահայտում բնակվող մարդկանց արժեքային համակարգը, ինչպես նաև խթանում կամ արգելակում են տնտեսական զարգացումը: Ըստ Կոնվենցիայի լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս:

Ի կատարումն Կոնվենցիայի ՀՀ Կառավարության 19.07.2012թ. հ.29 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման ռազմավարությանը: Ամուլսարի ծրագրի արդյունքում ոչնչանալու է Ամուլսարի լանդշաֆտը, ինչը ըստ Կոնվենցիայի առաջացնելու է տեսողական /վիզուալ/ աղտոտում: «Վիզուալ աղտոտման ներագդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա գնահատվում է որպես էսթետիկական բնույթի գործոն և համարվում ոչ պակաս վտանգավոր, քան շրջակա միջավայրի աղտոտման այլ տեսակները: Առօրյա կյանքում տեսողական աղտոտումից առաջացող ընկճվածության արդյունքում մարդը մշտապես գտնվում է հոգեբանական անհարմարավետության (դիսկոմֆորտի) վիճակում, ինչը բացասաբար է անդրադառնում մարդու տրամադրության և առողջության վրա»:

Ի կատարումն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների ՀՀ Կառավարության 19.07.2012թ. հ.29 արձանագրային որոշմամբ հաստատվել են Լանդշաֆտային ռազմավարության իրագործման ուղղված միջոցառումները, որտեղ նախատեսված է «ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու, գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին «N 501-Ն որոշման համապատասխան՝ ՀՀ Վայոց Ձորի Ջերմուկի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի՝ սպորտի և տուրիզմի կենտրոնի զարգացման ծրագրի և լանդշաֆտային խնդիրների ներառմամբ լրամշակման աշխատանքների համակարգում» և որպես առաջնային խնդիր նշված է «Ջերմուկի գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի հաստատման գործընթացի համակարգում:» Այսպիսով, Ամուլսարի ծրագիրը ամբողջությամբ խախտում է Կոնվենցիայի պահանջները, ինչպես նաև հակասում է Կոնվենցիայի իրագործման միջոցառումներին:

- **Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա**

Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշակութային ժառանգություն» են համարվում. «... հնագիտական բնույթի տարրերը կամ կառուցվածքները», «հնագիտական տեսարժան վայրեր ընդգրկող գոտիները, որոնք հանդիսանում են

պատմության, գեղագիտության, ազգագրության կամ մարդաբանության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք»: «Բնության ժառանգություն» են համարվում. «երկրաբանական և ֆիզիոգրաֆիական կազմավորումները և հստակ սահմանագատված գոտիները, որոնք ներկայացնում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք ունեցող և վտանգի ենթակա կենդանիների ու բույսերի տեսակների արեալներ»: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն ընդունում է, որ 1-ին և 2-րդ հոդվածներում հիշատակված և իր տարածքում գտնվող մշակութային ու բնության ժառանգության հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնումն ապահովելու պարտավորությունը դրվում է նախ և առաջ իր վրա»:

Ամուլսարի ծրագրի իրականացմամբ վնասվում են 81 պատմա-մշակութային հուշարձաններ /դամբարաններ, որոնք մշակութային ժառանգություն են և հազվագյուտ բույսերի և կենդանիների տեսակների արեալներ, որոնք ըստ Կոնվենցիայի բնության ժառանգություն են:

- **«Մնդիկի վերաբերյալ» Մինամատայի Կոնվենցիա**

Ամուլսարի ծրագրի իրականացումը կխախտի սույն Կոնվենցիայի պահանջները, չնայած որ այն վավերացվել է վերջին բնապահպանական փորձաքննությունից հետո:

## **12. Կոռուպցիայի տարրեր պարունակող հանգամանքներ և հարցեր**

Ամփոփելով, սույն վերլուծությունը, ակամա առաջացել են հետևյալ հարցերը և մտավախությունները, որոնց պատասխանները ստանալու դեպքում միայն պարզ կլինի իրական պատկերը.

- Ինչպե՞ս են տարբեր փորձագետներ տարիներ շարունակ տվել փորձագիտական դրական եզրակացություններ վերը նշված օրենսդրական արգելքների առկայության պարագայում և ինչպե՞ս են այդ անհիմն ու անօրինական եզրակացությունները հաստատվել տարբեր նախարարների կողմից: Ո՞վ է տվել իրենց այդ հանձնարարությունը:
- Ի՞նչ հիմնավորմամբ է ՀՀ ԳԱԱ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովը 29.02.2016թ. տվել դրական եզրակացություն: Անհրաժեշտ է պարզել ինչու՞ հանձնաժողովը չի անդրադարձել իր՝ 2012թ. որոշմանը, ովքե՞ր են հանձնաժողովի անդամներից մասնակցել նիստին, ի՞նչ կարծիքներ են եղել:
- Ինչպե՞ս է հանքարդյունահանության ոլորտում ընդհանրապես փորձ չունեցող Ընկերությունը թուլտվություններ ստացել:
- Ինչու՞ Ընկերությունը փորձաքննության է ներկայացրել թերի, կեղծ, ոչ արժանահավատ տվյալներ:
- Ինչու՞ Ընկերությունը, ունենալով 2009թ. փորձագիտական դրական եզրակացություն և հանքարդյունահանման թույլտվություն չի սկսել հանքավայրի շինարարական աշխատանքները և տարբեր պայմանագրերով ժամկետները փոփոխվել են, հարմարեցնելով Ընկերության նախապատվություններին: Հնարավո՞ր է արդյոք, որ Ընկերությունը իրականում մտադրություն չունի հանքարդյունահանմամբ զբաղվի:

- Ինչու՞ Ընկերությունը, չսկսելով շինարարական աշխատանքները, մի քանի անգամ փոփոխություն է արել նախագծում՝ ավելացնելով տարածքներ և պաշարներ և ստացել է համապատասխան թույլտվություններ: Արդյունքում, պետությունը կրել է վնասներ, քանի որ սահմանված ժամկետում հանքարդյունահանություն չի սկսվել և պետական բյուջե հարկեր չեն վճարվել:
- Ինչու՞ Ջերմուկ ու Կեչուտ համայնքները չեն ճանաչվել ազդակիր համայնքներ:
- Ինչու՞ Ջերմուկ ու Կեչուտ համայնքներում հանրային լուսմներ չեն անցկացվել և ինչպե՞ս է այդ պարագայում 2016թ. տրվել փորձաքննական դրական եզրակացություն
- Ինչու՞ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի մյուս համայնքները, որոնք օգտվում են այդ ջրհավաք ավազանի ջրերից չեն ճանաչվել ազդակիր համայնքներ, երբ 2016թ. պարզ է եղել, որ առկա է թթվային դրենաժի և ջրերի աղտոտման ռիսկ:
- Ինչու՞ է ՀՀ Կառավարությունը 31.06.14թ. հ.781-Ն որոշմամբ հաստատել «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման» Կարգը /այսուհետ՝ Կարգ/, որի դրույթները ամբողջովին հակասում են ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթներին /տես՝ սույն Եզրակացության 5-րդ կետը/: Ըստ էության, հատուկ նախատեսված է եղել այս Ամուլսարի տարածքում գտնվող Մատնունի ծիրանավոր բույսի տեղափոխման համար, քանի որ 2014թ. ի վեր բացի այս դեպքից, այլ թույլտվություն տրված չի եղել և ժամանակագրական առումով համընկնում է այդ տարածքում Մատնունի ծիրանավորի հայտնաբերման հետ:
- Ինչու՞ պաշարներ հաստատելիս չեն նշվել ուղեկցող նյութերը և թաքցվել են ուրանի, թորիումի, կապարի, ցինկի, երկաթի, ալյումինի, յարոգիտի, մկնդեղի և այլ տարրերի առկայությունը հանքաքարում, այն դեպքում, որ երկրաբանական ֆոնդում առկա են Գրոմովի Էսպեդիցիայի 1954թ. տվյալները և Ա.Քոչարյանի 1969թ. դոկտորական աշխատությունները:
- Ի՞նչ հիմքով է Ջերմուկի երկրորդային քվարցիտների հանքավայրը 2006թ-ին ուսումնասիրման լիցենզիայի սահմաններում տրամադրվել «Գեոթիմ» Ընկերությանը և նրանցում ոսկու պաշարներ հաստատելիս արդյո՞ք երկրորդային քվարցիտները դադարում են օգտակար հանածո լինելուց:
- Ինչու՞ Կենսառեսուրսների կառավարման գործակալությունը՝ իր 01.09.14թ. հ.22-8/100 գրության մեջ, նշելով, որ տարածքում առկա են էնդեմիկ և Կարմիր գրքում գրանցված բույսեր, 14.10.2014 22-8/121 գրությամբ ընդունում է Ընկերության պարզաբանումները և չի նշում, որ այդ տարածքում արգելվում է որևէ տեսակի գործունեության իրականացումը, այդ թվում հանքարդյունահանությունը:
- Ինչու՞ նախարարություններն ու գերատեսչությունները չեն ներկայացրել առարկություններ և առաջարկներ /ըստ ոլորտների/:
- Ինչու՞ պատմամշակութային օբյեկտները չեն վերցվել պետական հսկողության ու պաշտպանության տակ և չի արգելվել տնտեսական գործունեությունը այդ տարածքներում:

- Ինչու՞ ՀՀ կառավարության 10.03.15 N 244-Ն որոշմամբ փոփոխություն է մտցվել ՀՀ Կառավարության 21.01.10թ. N 51-Ն որոշման մեջ և ավելացվել է բացահայանքային ավտոմոբիլային ճանապարհների երկայնական թեքությունը, մինչև 100%: Ի՞նչ կապ ունի այդ փոփոխությունը Ընկերության ճանապարհների կառուցման հետ /խոսքը գնում է Ընկերության կողմից 100մլն դոլար տնտեսելու մասին/:
- Ինչու՞ Քաղաքաշինության պետական տեսչությունը ստուգումներ չի կատարել Ընկերությունում:
- Ինչու՞ չեն կատարվել տնտեսագիտական վերլուծություններ՝ տնտեսական և բնապահպանական կորուստների և օգուտների /կարճաժամկետ և երկարաժամկետ/, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի, աղքատության աճի և այլ սոցիալական, բնապահպանական ու տնտեսական ռիսկերի վերաբերյալ: Ի վերջո, երկրի համար ներդրումներ ունենալը պետք է ինքնանպատակ չլինի, այլ դրանք պետք է լինեն անվտանգ՝ էկոլոգիական, ազգային և սննդային անվտանգության, մարդկանց առողջության տեսանկյունով և պետության համար շահավետ:
- Ինչու՞ չի անցկացվել պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն /տես՝ սույն Եզրակացության 9-րդ կետ/: Անհրաժեշտ է անցկացնել պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն:
- Ի՞նչ նպատակով և ու՞մ են տրվել Ծրագրի սոցիալական բաղադրիչով գումարները, որքանո՞վ են դրանք արդյունավետ ծախսվել /արդյոք տրվել են միայն ազդակիր համայնքներին, արդյո՞ք չեն տրվել այդ գումարները փոխկապակցված անձանց կամ որոշումներ ընդունող անձանց, կամ պետության կողմից ֆինանսավորող ծրագրերի համար և այլն/:
- Արդյո՞ք հողերի գնման գործընթացում չեն կիրառվել կոռուպցիոն մեխանիզմներ:
- Արդո՞ք արդար է ձեռք բերվել Գնդեվազի բնակիչներից հողերը և հավասար պայմաններով են փոխհատուցել
- Արդո՞ք ծրագրի տարածքում գտնվող բոլոր հողերի կատեգորիաները փոխվել են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ինչու՞ է ՀՀ Կառավարության 20.04.2017թ. N 417-Ա «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» որոշմամբ արտոնություններ տրվել այն ապրանքների համար, որոնք Ընկերության գործունեության /հանքարդյունահանում/ հետ կապ չունեն: Մասնավորապես. հ.1 Հավելվածում նշված են՝ իտալական դոներ /2685 հատ/, պատուհաններ /1500 հատ/, դոների և պատուհանների համար ֆուրնիտուրա /500հատ+2,448 հատ Չեխական/, ջահեր և այլ էլեկտրական լուսավորման սարքավորումներ՝ կախովի կամ պատի /12500 հատ, սալիկներ՝ գիպսից, առաստաղի /9500հատ/, լվացարանակոնքեր, լվացարաններ, լոգարաններ, բիդեներ, զուգարանակոնքեր /293 հատ/, ընդամենը՝ 27 677 784 604 ՀՀ դրամ արժողությամբ:
- Արդո՞ք Ընկերությունը կանոնավոր վճարում է հարկերը և այլ պետական վճարումները:



- Արդո՞ք Ընկերությունը ունի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները գործունեություն իրականացնելու համար /օր. ջրի, կեղտաջրերի հեռացման, արտանետումների և այլն/

## Եզրակացություն

Հաշվի առնելով, վերը նշված փաստերը և հանգամանքները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի բազմաթիվ կոպիտ խախտումները, որոնք զգալի և անդառնալի վնաս կարող են հասցնել բնակչության առողջության, շրջակա միջավայրին և ազգային անվտանգությանը՝ գտնում եմ, որ Ամուլսարի ծրագրի իրականացումը անթույլատրելի է: Օրենքի խախտմամբ տրված բոլոր թույլտվությունները և փորձաքննական եզրակացությունները պետք է ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվեն:

Աշխատանքային խմբի անդամ,

Էկոլոգ-իրավաբան՝

Նազելի Վարդանյան

26.08.2016թ.